ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 50. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Վասկո դա Գաման արժանացավ տեղի ռաջայի (իշխան) ընդունելությանը և նավաստիներին կարգադրեց համեմունքներ գնել: Սակայն արաբ վաճառականները համոզեցին ռաջային բանտարկել ափ իջած պորտուգալացիներին: Դրան ի պատասխան Վասկո դա Գաման ձերբակալեց նավերը դիտելու եկած մի քանի հնդիկ ազնվականների: Այդ ժամանակ ռաջան բաց թողեց բանտարկվածներին և նավակներ ուղարկեց հնդիկների հետևից: Բայց Վասկո դա Գաման նավակները դիմավորեց թնդանոթային արկերով և հրաժարվեց գերիներին վերադարձնել: Այսպես, թնդանոթային համազարկերով եվրոպացիները ազդարարեցին իրենց հայտնվելը Հնդկաստանում: Նավերը բեռնելով համեմունքներով, պորտուգալացիները բռնեցին վերադարձի ճանապարհը: Եվրոպա բերված համեմունքները 60 անգամ ավելի արժեին, քան ծախսվել էր Վասկո դա Գամայի արշավախումբը կազմակերպելու վրա:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ XV-Դ. ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XVIII-Դ.


ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ԱՖՐԻԿԱ
ԱՍԻԱ
ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գրենլանդիա կղ.
Իսլանդիա կղ.
Նյու-Յորք (Նոր Ամստերդամ)
Մադրաս (Պորտ.)
Լիսաբոն
Սանտյագո
Բուենոս-Այրես
Դիո դե Ժանեյրո
Սանտա Ֆե
Լիմա
Մեխիկո
Հավանայի կղ.
Սենեգալ
Ռոկե ատ
Հասուպ
Սբ. Հելենի կղ. (Նիդ.)
Ֆոլկլենդյան կղ.
Հոր երկիր կղ.
Մագելանի կնդուց
Բարեհուսի հրվ.
Ամստերդամ
Ամստերդամ
Լոնդոն
Փարիզ
Մադրիդ
Լիսաբոն
Ֆլորենցիա
Վենետիկ
Ստամբուլ
Սմիրնա
Ալեքսանդրիա
Կարթագեն
Ալգիր
Թունիս
Տրիպոլի
Ֆեզ
Սևիլիա
Գիբրալտար
Ալեքսանդրիա
Մեքքա
Դելհի
Գոա
Մանիլա
Ֆորտ Սանտյագո
Ֆորտ Սանտյագո
Ֆորտ Սանտյագո

2

Կոլումբոսը ծնունդով Իտալիայի Ճենովա քաղաքից էր: Երբ օսմանյան նվաճումները խաթարեցին իտալական քաղաքների առևտրական կապերը, նա շատ իտալացիների պես արտագաղթեց Պորտուգալիա: Երիտասարդ տարիքում մասնակցել է ծովային արշավախմբերի, հմտացել աշխարհագրական քարտեզներ կազմելու գործում: Հետագայում, հաստատվելով Իսպանիայում, Կոլումբոսը երկար տարիներ փորձում էր թագավորին համոզել ծովային արշավախումբ ձեռնարկել Ատլանտյան օվկիանոսով դեպի Հնդկաստան հասնելու համար: Միայն 8 տարի անց նա 3 ոչ մեծ նավ ստացավ՝ դեպի արևմուտք իր նավարկությունը կատարելու համար:

Կոլումբոսը այդպես էլ չիմացավ, որ նոր մայրցամաք է հայտնագործել: Նա համարում էր, որ իր հասած երկիրը «Հնդկաստանն» է, և տեղաբնիկներին անվանեց ***«ինդկացիներ»***: Այդ անվանումը այդպես էլ ամրագրվեց Ամերիկայի տեղաբնիկների վրա: Իսկ նրա հայտնագործած ցամաքը և կղզիները, իրական Հնդկաստանից տարբերելու համար, երկար ժամանակ անվանում էին ***Վեսպ Ինդիա*** (Արևմտյան Հնդկաստան): Հետագայում իտալացի հետազոտող ***Ամերիգո Վեսպուչին*** ապացուցեց, որ Կոլումբոսը նոր մայրցամաք է հայտնագործել: ***Այդ մայրցամաքը Ամերիգոյի անունով կոչվեց Ամերիկա:***

3

Առաջինը գաղութների տիրացան պորտուգալացիները և իսպանացիները: Օգտվելով իրենց ռազմական նավատորմի գերազանցությունից՝ պորտուգալացիները արաբներին դուրս մղեցին Հնդկական օվկիանոսից և սկսեցին վերահսկել Հնդկաստան տանող արևելյան ծովային ուղին: Նրանք զավթեցին Արևելյան Աֆրիկայի, Հնդկաստանի և Արաբիայի ծովափնյա կարևոր նավահանգիստները: Ձավթված քաղաքների բնակիչներին ոչնչացնում էին և տեղում ամրոցներ կառուցում: Չնչին գներով գաղութացված երկրներից համեմունքներ գնելով և դրանք Եվրոպայում վերավաճառելով՝ մեծ եկամուտ էին ստանում:

Նույն կերպ հարստանում էին իսպանացիները համեմունքների երկրներ հասնելով Խաղաղ օվկիանոսով: Որպես հենակետ նրանք գաղութացրին ***Ֆիլիպինյան*** և այլ կղզիներ: Նվաճված տարածքները պորտուգալացիները և իսպանացիները վերածում էին իրենց գաղութների, տեղաբնիկներից խլում էին հողերը՝ նրանց դարձնելով ստրուկներ:

Եվրոպացիների բերած վարակիչ հիվանդություններից և դաժան

շահագործումից տեղաբնիկները մասսայաբար մահանում էին: XVI դ. կեսին իսպանացիները լիովին ոչնչացրին Կուբայի և այլ կղզիների տեղաբնիկներին:

Գաղութացված երկրների բնիկների զանգվածային մահացության պատճառով սկսեցին Աֆրիկայից սևամորթ ստրուկներ տեղափոխել Ամերիկա: 1540 թ. եվրոպական միակ երկիրը, որ զբաղվում էր ստրկավաճառությամբ, Պորտուգալիան էր: Հետագայում, սևամորթներ որսալու եկամտաբեր գործին միացան իսպանացիները, հոլանդացիները, ֆրանսիացիները և անգլիացիները: Ստրկավաճառությունը լայն թափ առավ: 1500–1900 թթ. ընթացքում Աֆրիկայից 12 միլիոն ստրուկ տարվեց Ամերիկա, որից 1,8 միլիոնը փոխադրման անմարդկային պայմանների հետևանքով մահացավ հիվանդություններից և սովից:

Իսպանիայի թագավորը Ամերիկա նորանոր արշավախմբեր էր ուղարկում ոսկի գտնելու համար: XVI դ. իսպանացիները նվաճեցին ամբողջ Հարավային Ամերիկան և Հյուսիսային Ամերիկայի հարավային մասը՝ ներկայիս Մեքսիկայի, Ֆլորիդայի, Թեքսասի և Կալիֆոռնիայի տարածքը: Հարավային Ամերիկայի արևելյան մասը՝ Բրազիլիան, գրավեցին պորտուգալացիները:

1545 թ. իսպանացի նվաճողները Հարավային Ամերիկայում (ներկայիս Բոլիվիայում) արծաթի հարուստ հանքեր հայտնաբերեցին: Հանքերում աշխատեցնում էին տեղի հնդկացիներին: Հետագայում Աֆրիկայից 30000 սևամորթ ստրուկներ տեղափոխեցին հանքերում աշխատեցնելու համար: Հանքավայրի շուրջը ձևավորվեց հանքագործների քաղաքը՝ Սիեռա Պոտոսին (իսպաներեն՝ հարուստ լեռ): XVI դ. վերջին աշխարհում արծաթի հանույթի 60%-ը ստացվում էր Սիեռա Պոտոսիից:

Հետագա դարերում իսպանացիները և պորտուգալացիները բախվեցին եվրոպական այլ տերությունների մրցակցությանը, որոնք նույնպես սկսեցին տարածքներ գրավել Ամերիկայում: Ֆրանսիացիներն ու անգլիացիները հիմնականում հաստատվեցին Հյուսիսային Ամերիկայում և Կարիբյան ծովի կղզիներում: Գաղութարարները, տեղաբնիկներին ոչնչացնելով, վերաբնակվում էին այնտեղ՝ իրենց համար նոր հայրենիք ստեղծելով: Արդյունքում, XVI–XVII դդ. առաջացան իսպանախոս Լատինական Ամերիկան, անգլիախոս և ֆրանսիախոս Հյուսիսային Ամերիկան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Ի՞նչ էին ասում Հնդկաստանում պորտուգալացի գաղութարարների մասին

Գաղութացման գործընթացը առաջիններից մեկը սկսեցին պորտուգալացիները: Բայց նրանց ուժերից վեր էին ամբողջ Հնդկաստանի և Ասիայի երկրների նվաճումը և գաղութացումը: Պորտուգալացիներին հաջողվեց նվաճել և գաղութացնել Հնդկաստանի, Արաբիայի, Արևելյան Աֆրիկայի կարևորագույն ծովափնյա քաղաքները: Նրանք ոչնչացնում էին տեղաբնիկներին և ամրոցներ կառուցում այնտեղ: Հնդկաստանում ասում էին՝ բարեբախտություն է, որ պորտուգալացիներն այնքան քիչ են, որքան վագրերը և առյուծները, եթե ոչ՝ նրանք կոչնչացնեին մարդկային ողջ ցեղը:

Իսպանացի եպիսկոպոս Լաս Կալասը գաղութներում իսպանացիների վայրագությունների մասին

Հնդկացիները ապստամբեցին, բայց նրանց զենքը խղճուկ ու չնչին էր: Քրիստոնյաները իրենց ձիերով, սրերով, նիզակներով վրա տվեցին, ամենուրեք ջարդեր ու աննկարագրելի դաժանություններ արեցին:

Մտնելով գյուղերը՝ նրանք կապը կտրած շների նման չէին խնայում ո՛չ երեխաներին, ո՛չ ծերունիներին, ո՛չ կանանց, արմատապես ոչնչացնելով ամեն կենդանի բան, քանդում և ավերում էին՝ քարը քարի վրա չթողնելով: Նրանք շինում էին հսկայական կախաղաններ և հնդկացիներին կենդանի այրում էին խարույկների վրա: